

ԱՐԻՔԵՉԱՆԻ ՔԱՅՔԱՅԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ

ՎԱԿԵՐԱԳՐԵՐ

Երևանում ադրբեջանական առաքելության
պահնորդների¹ դատական գործը^{2*}

Օսմանյան, այնուհետև քենալական Թուրքիայի հետ գործակցելով՝ Ադրբեջանը 1918–1920 թվականներին քայքայիչ գործունեություն է իրականացրել Հայաստանի առաջին հանրապետության նկատմամբ՝ այդ աշխատանքների մեջ ներգրավելով Երևանում հաստատված իր լիազոր-ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմին:

Նման գործունեության ընթացքում Ադրբեջանն ու Թուրքիան ղեկավարվել են համիալամական ու համաթուրանական համերաշխությամբ՝ գլխավոր նպատակ ունենալով արևելահայության ցեղասպանությունը, նորաստեղծ հայկական պետության վերացումը և երկու երկրների տարածքների անմիջական միավորումը:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող՝ Երևանում Ադրբեջանի լիազոր-ներկայացուցչության հետ կապված դատավարության փաստաթղթերը հակահայկական գործունեության սուկ մի դրվագն են, որն իրականացնում էր մուսավաթական Ադրբեջանը՝ ամբողջովին ոտնահարելով միջազգային իրավունքի նորմերը:

Ներկայումս, երբ վերածնվել ու շարունակվում է Հայաստանի երրորդ հանրապետության կենսական շահերի դեմ ուղղված Ադրբեջանի ու Թուրքիայի ավանդական քաղաքականությունը, 1920 թվականին Երևանում կազմակերպված դատավարության արձանագրության հրապարակումը բացահայտում է հակառակորդի հակահայ գործողությունների աշխատակարգերը: Այն վկայում է, որ 1920 թ. գարնանից Շուշիում և ապա Զանգեզուրում ցեղասպանական գործողությունների համար ձեռքերի ազատություն ստանալու նպատակով Ադրբեջանը սկսել էր հետևողականորեն օգտագործել Հայաստանի տարածքում առկա թաթարական ապստամբ շրջանների ներուժը՝ նրանց դրդելով ավելի ակտիվ գործողությունների: Նշված նպատակն իրականացնելու համար Երևանում գործող Ադրբեջանի լիազոր ներկայացուցչությունում ծառայող 3 պահնորդներ (դավասներ) 1920 թ. ապրիլի 4-ին փորձում են այդ երկրի լիազոր ներկայացուցիչ Թեմուր բեկ Մակինսկու³ տրամադրած փողի պարկը փոխադրել Զանգիբասարի (Մասիսի-Վ.Ղ.) շրջան՝ ապստամբ թաթարներին հանձնելու համար: Մակայն փորձը ձախողվում է. պահնորդները ճանապարհին ձերբա-

3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013
Ե (ԺԵ) քաղթ, թիվ 3

ՎԻՄ համահայկական հանդես

*Ընդունվել է տպագրության 26.07.2013:

1 Պահնորդ – ադրբեջաներեն «ղավաս», ռուսերեն «стражник» հասկացության թարգմանությունն է:

2 Փաստաթղթի վերնագիրը:

3 Երևանում Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչները հաջորդաբար եղել են Հախվերդովը, Թեքինսկին, Հախվերդովը, Մուսանը (ներկայացուցչական քարտուղար), Մակինսկին:

կալվում են ՀՀ միլիցիայի աշխատողների կողմից և որպես հանրապետության օրենքները խախտող հանցագործներ՝ հանձնվում են դատի, իսկ Թեմուր բեկ Մակինսկին, գնացք ստեղծելով, խայտառակ կերպով փախուստի է դիմում Երևանից:

Ադրբեջանի լիազոր-ներկայացուցչության 3 պահնորդների դատական գործը հանրապետության զինվորական դատարանում լավել է 1920 թ. հունիսի 3-ին, որից ընդամենը 20 օր անց Հայաստանի Հանրապետության բանակի ստորաբաժանումները, ճեղքելով Զանգիբասարի շուրջ թաթարների կողմից փորված խրամատները, վերջ դրեցին հակառակորդի փողերով խափանարարական գործողություններով զբաղվող այդ ապստամբ շրջանի գոյությանը:

Հրապարակվող փաստաթուղթը 1920 թ. հունիսի 3-ի դատավարության նիստի արձանագրությունն է:

Վլադիմիր Ն. Դազախեցյան
Պատմ. գիտ. դոկտոր

AZERBAIJAN'S DESTROYING ACTIVITY IN ARMENIA IN 1920

The lawsuit of the guards of Azerbaijani mission in Yerevan

Vladimir N. Gzazakhetsyan

* * *

1920 թ. հունիսի 3-ին Երևանի քաղաքային դումայի շենքում Հայաստանի Հանրապետության զինվորական դատարանը դժբաղ նիստում քննեց Երևանում ադրբեջանական առաքելության 3 պահնորդների մասին գործը, որոնք մեղադրվում էին Գրեական օրենսգրքի 51 և 100 հոդվածներով:

Այս բացառիկ կարևորություն ունեցող գործը նիստերի դահլիճ էր բերել մեծաթիվ մարդկանց: Ներկա էին քաղաքական կուսակցությունների և բոլոր ուղղությունների մամուլի ներկայացուցիչներ, խորհրդարանի անդամներ և շատ այլ անձինք: Դատավարությանը ներկա էր նաև Երևանում վրացական առաքելությանը կից զինվորական կցորդ, Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնակատար գեներալ Կարալովը:

Գործի լուսմը սկսվեց առավոտյան ժամը 10-ին և ավարտվեց երեկոյան ժամը 8-ին:

Գործի կապակցությամբ որպես վկաներ կանչված էին՝ նախկին արտաքին գործերի նախարար Ա. Ի. Խատիսյանը, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Տ. Տեր-Հակոբյանը, արտաքին գործերի նախարարության քաղաքական բաժնի վարիչ Պ. Գ. Յակուբյանը, շրջանային կոմիսար Շուխովը, միլիցիոներ Հակոբյանը, միլիցիայի պետի օգնական Առաքելյանը, Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մակինսկին, ադրբեջանական առաքելության խորհրդական Միր-Բաբաևը և ադրբեջանական առաքելության ավագ պահնորդ Հուսեյն Դարիբովը:

Թիֆլիսում գտնվող ադրբեջանական առաքելության դիվանագիտական ներկայացուցիչ Մակինսկին և այդ առաքելության ծառայողները նիստին չեն ներկայացել:

Ամբաստանությունը պաշտպանում էր Զինվորական դատարանի դատախազ Ա. Ս. Եղիազարովը: Ամբաստանյալներին պաշտպանում էր, դատարանի նշանակմամբ, վառարար Բաղրամովը:

Մեղադրական ամբաստանագիր

ՎԳԼԵՆԵՐԻ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հայխ-մեպրմեթեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

Ընթերցվեց հետևյալ մեղադրական ակտը. «1920 թ. ապրիլի 4-ին Էջմիածնի գավառի Ույթափալարի (այժմ՝ Եռաբլուր - Վ.Ղ.) պահակակետի ավագ միլիցիոններ Համբարձում Հակոբյանը Ջաֆարաբադ (այժմ՝ Արգավանդ - Վ.Ղ.) գյուղի մոտ ձեռքակալել է ապստամբների կողմից գրավված Ջանգիբասարի շրջան մեկնող երեք թաթարներին:

Այս առիթով կատարված հետաքննությամբ, այնուհետև նախաքննությամբ գործի հանգամանքներն են. Հայաստանի Հանրապետության Ադրբեջանի դիվանագիտական առաքելությունը, ի կատարումն իր կառավարության որոշման, ինչպես այդ երևում է գործին կցված վերծանված հեռագրերից, ամեն կերպ նպաստել է Վեդիբասարի (այժմ՝ Արարատ Վ.Ղ.), Ջանգիբասարի և Նախիջևանի շրջանների ապստամբական դրությամբ:

Այսպես, Ադրբեջանի արտաքին գործերի մինիստրի անունով դիվանագիտական ներկայացուցչի հեռագրում ասվում է, որ Նախիջևանի համար դրամի չտացվելը կթուլացնի գեներալ-սահանգապետի աշխատանքը և էական վնաս կրերի Ադրբեջանի հանրապետության գործին: «Ջանգիբասարը, - ասված է այնուհետև հեռագրում, - առանց մեր դրամական օգնության դարձյալ կգտնվի խիստ դժվարին վիճակում, իսկ այդ ձեռնառու է Հայաստանին: Այդ երկու շրջանները ես պահում եմ նրանով, որ փողն արդեն Թիֆլիսում է և Երևան բերելուն պես անմիջապես կհասցվի ըստ նշանակման: Ուշացման յուրաքանչյուր րոպեն ուժեղ կերպով ազդում է մեր շահերի վրա»:

Մույն թվի մարտի 24-ին Ադրբեջանի արտաքին գործերի մինիստր Խան-Խոյսկին⁴ Հայաստանում դիվանագիտական ներկայացուցչի Մակինսկյուն ուղարկել է գաղտնագիր հեռագիր հետևյալ բովանդակությամբ. «Մարտի 22-ի գիշերը ամբողջ Ղարաբաղում բռնկել է հայերի ապստամբություն: Միաժամանակ հայկական զինված ուժերի հարձակումներ են կատարվել մեր գործուսուների վրա Խանքենդիում (այժմ՝ Ստեփանակերտ - Վ.Ղ.), Ասկերանում, Թարթառում և այլ վայրերում: Հարձակումներն առայժմ հետ են մղվել: Հայերի կորուստներն ավելի մեծ են: Ամենուրեք մարտեր են գնում: Ձեռնարկված են բոլոր անհրաժեշտ միջոցները: Շտապ հայտնեք Վեդիբասարի և Նախիջևանի շրջանների հետագա իրադարձությունների մասին: Անհրաժեշտ է անմիջապես բոլոր միջոցներով հնարավոր օգնությունը ցույց տալ Վեդիբասարին ու Նախիջևանին և տեղեկացնել նրանց Ղարաբաղի իրադարձությունների մասին»:

Հիշյալ հեռագիրն ստանալուն պես Մակինսկին Ջանգիբասար է ուղարկել, որպես պահնորդ ծառայող, Երևանի գավառի Ղարաղշլաղ (Դոստոյուղ) գյուղի բնակիչ Հուսեյն Վալի օղլուն՝ պարզելու նպատակով, ինչպես դա ցուցում է տալիս ինքը՝ Վալի օղլին, «թե մտադիր են արդյո՞ք գանգիբասարցիները ենթարկվել Հայկական կառավարությանը, ինչպիսի գինված ուժեր ունեն և ինչպիսին է ընդհանրապես նրանց մտադրությունը»:

Հուսեյն Վալին հավաքած տեղեկությունները հանձնել է Թեմուր Բեկ Մակինսկյուն: Վերը նկարագրածից մի քանի օր անց Մակինսկին նորից է հրավիրում Հուսեյն Վալի օղլուն և հրամայում պահնորդներ՝ Երևան քաղաքի բնակիչներ Մուսա Մաշադի Մամեդ օղլու և Մաշադի Մամեդ [Մաշադի] Հուսեյն օղլու հետ Շորլու-Դեմուրսի գյուղում բնակվող Ջանգիբասարի կառավարության ղեկավար Մուլա Կասումի համար տանել փողով պարկ:

Պարկում, ըստ Հուսեյն Վալի օղլու խոսքերի, դրված է եղել տաս կապոց, 50 հազար ռուբլի յուրաքանչյուրում, ադրբեջանական և 100 հազար ռուբլի անդրկովկասյան բռներով:

Նշված պարկը Թեմուր Բեկ Մակինսկին անձամբ հանձնել է Հուսեյն Վալի օղլուն, իր կողմից հրավիրված Մուսա Մաշադի Մամեդ օղլու և Մաշադի Մամեդ Մաշադի [Հուսեյն] օղլու ներկայությամբ, որոնց Մակինսկին հրամայել է Ջանգիբասար ուղեկցել Հուսեյն Վալի օղլուն:

Թեմուր բեկի պահանջով առաքելության մուտքին է մատուցվել առաքելությանը պատկանող ինքնաշարժը, որը վարում է Իվախնենկոն:

Բոլոր նշված պահնորդները տեղավորվել են ինքնաշարժում և մեկնել Ջաֆարաբադ գյուղի ուղղությամբ: Միտենայով գյուղին, Իվախնենկոն կանգնեցրել է ինքնաշարժը՝ հետագա ձանապարհի անսարքության պատճառով: Իվախնենկոն մնացել է ինքնաշարժում, իսկ սուրհանդակները պարկով հետիոտն շարժվել են դեպի գյուղ:

4 Խոյսկի Տաթալի խան Իսկենդեր օղլի (1875-1920) - Ադրբեջանի Դեմոկրատական հանրապետության առաջին վարչապետ և արտաքին գործերի մինիստր:

Գյուղի մոտ նրանց նկատել են գյուղացիները և այդ մասին տեղեկացրել Ուչթափալարի պահակակետի ավագ միլիցիոներ Հակոբյանին: Վերջինս, հասնելով տուրհանդակներին, առաջարկել է կանգնել: Պահնորդները սկզբում չեն ենթարկվել, բայց տեսնելով, որ գյուղացիներն իրենց շրջապատում են և չի հաջողվի թաքնվել, կանգնել են: Այն հարցին, թե ովքեր են և ուր են ուղևորվում, պահնորդները պատասխանել են, որ իրենք ծանայում են աղբրեջանական առաքելությունում և ուղևորվում են Ջանգիբասար՝ բրինձ և հացահատիկ գնելու: Պահնորդներից մեկը մի կողմ է հրավիրել Հակոբյանին և նրան առաջարկել 2 կապոց փող՝ խնդրելով իրենց ազատ թողնել: Չընդունելով առաջարկությունը՝ Հակոբյանը նրանց ուղեկցել է գավառային կոմիսարի մոտ, պատահածի մասին զեկուցելու համար:

Այնուհետև, հետաքննություն կատարելու ժամանակ, մեղադրյալներից վերցվել է փողի պարկը, որում հայտնաբերվել է 499.750 ռուբլի աղբրեջանական, 11.050 ռուբլի անդրկովկասյան բոներով և 1100 ռուբլի չեկերով:

Սույնը հաստատել են վկաներ՝ Երևանի քաղաքային միլիցիայի պետի օգնական Առաքելյանը, Էջմիածնի գավառի 2-րդ շրջանի կոմիսար Շուխովը, Էջմիածնի գավառի ավագ միլիցիոներ Հակոբյանը և հենց մեղադրյալների տված ցուցմունքները:

Գործի հանգամանքներով հարցում արված մեղադրյալները տվեցին ցուցմունք.

Հուսեյն Վալի օղլի. սկզբում ասաց, թե դրամը իրեն հանձնել է հյուպատոսը Շորլու-Դեմուրչի գյուղի բնակիչ Միլլա Կասումին փոխանցելու համար, ընդ որում իրեն հանձնարարված է եղել գնել 150 փութ հացահատիկ և 50 փութ բրինձ, որ իրեն մինչև Ջանգիբասար պետք է ուղեկցեր պահնորդ Մաշադի Մամեդ Մաշադի Հուսեյն օղլին, իսկ երկրորդ անգամ հարցաքննվելուց հետո, թե բրնձի և հացահատիկի վերաբերյալ ցուցմունքները եղել են կեղծ, և որ ինքը այդ ցուցմունքը տվել է՝ վախենալով հյուպատոսից, որ դրամը պ. Մակինսկու հանձնարարությամբ պետք է հանձնել Ջանգիբասարի կառավարությանը, որ դեպքից 2 օր առաջ, նույն Մակինսկու հրամանով, եղել է Ջանգիբասարում՝ ռազմական իրադրությունը, Հայկական կառավարությանը հանձնվելու կապակցությամբ գոյություն ունեցող մտադրությունները պարզելու համար, որ հյուպատոսը այդ հանձնարարությունները արել է հենց իրեն, որովհետև ինքը «Միր-Ֆաբանի հավատարիմ ծառան է, որ հյուպատոսին տեղեկություններ է բերել այն մասին, որ Ջանգիբասարը կարող է տալ 3 հազար սվին, 100 հեծյալ, 4 գնդացի, որ այնտեղ գտնվում են շուրջ 50 թուրք ասկյարներ, 4 վերակա և մեկ գնդապետ: Այնուհետև, նախաքննության ժամանակ նա՝ Հուսեյն Վալի օղլին, սկզբում ընդունեց իր մեղավորությունը, ըստ նրան ներկայացված մեղադրանքի, ավելացնելով, որ ճանապարհին ինքը պահնորդներին ասել է, որ պարկում, որը տանում էր Ջանգիբասար, դրամ է, որ հետաքննության ժամանակ ինքը ասել է միայն ծջարտությունը, որ ամեն ինչ իր գլխում խառնվել է և որ փողը նա պետք է հանձնել Ջանգիբասարի կառավարության ղեկավար Միլլա Կասումին և բերել 50 փութ բրինձ և 150 փութ հացահատիկ, ընդ որում բրնձի փութը արժե 750 ռուբլի, իսկ հացահատիկի փութը՝ 800 ռուբլի, իսկ հետո երկրորդ անգամ մեղադրանք ներկայացնելու ժամանակ մերժել է իրեն հանցավոր ճանաչել:

Մաշադի Մամեդ Մաշադի Հուսեյն օղլի. չճանաչելով իրեն մեղավոր՝ բացատրեց, որ հյուպատոսը իրեն գորանոցից կանչել է և հրամայել ուղեկցել Հուսեյն Վալի օղլուն, որ փողի տեղի մասին ինքը չի իմացել մինչև դրա հայտնաբերվելը, ապա ցուցմունք է տվել, որ ճանապարհին Հուսեյնը ասել է, որ փող է տանում, իսկ նախաքննության ժամանակ՝ թե ինքը լսել է, որ պարկում, որտեղ փող է եղել, ծխախոտ է:

Մուսա Մաշադի Մամեդ օղլի. նույնպես չընդունեց իր մեղավորությունը՝ ըստ ներկայացված մեղադրանքի, ցուցմունք տվեց, որ հյուպատոսը իրեն հրամայել է ուղեկցել Հուսեյն Վալի օղլուն Ջաֆարաթ գյուղ, որ փողի մասին ինքը ոչինչ չի իմացել, որ իրենց ձեռնարկությունից 2 օր առաջ Հուսեյնը եղել է Ջանգիբասարում:

Դիվանագիտական ներկայացուցիչ Մակինսկին դեպքի հաջորդ օրը Հայաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված գրության մեջ հայտնում է, որ ավագ կապավորը իրեն զեկուցել է, որ նախօրյակին ժամը 6-ին՝ կեսօրից հետո, «կապավորներ Մաշադի Մամեդ Մաշադի Հուսեյն օղլին, Մուսա Մաշադի Մամեդ օղլին և Հուսեյն Վալի օղլին» ինքնակամ վերցրել են առաքելության ինքնաշարժը և **մեկնել շրջագայության**, ինչպես դա նրանք հաճախ արել են նաև անցյալում:

Նույն օրը պ. Մակինսկին տեսակցել է արտաքին գործերի նախարար Խատիսյանի հետ և **բացասական** է պատասխանել տրված հարցերին. 1. տուրհանդակներն արդյո՞ք

մեկնել են Մակինսկու գիտությանը, 2. կորել է արդյո՞ք որևէ բան առաքելությունում կամ ներկայացուցչի մոտ, 3. ինքը՝ Մակինսկին, իր կառավարությունից ստացել է արդյո՞ք հեռագրեր Վեդիբասարի և Նախիջևանի շրջանների ապստամբներին օժանդակելու վերաբերյալ:

Նախաքննության ժամանակ տված ցուցմունքում Մակինսկին հաստատել է, որ «սուրհանդակները» առաքելության ինքնաշարժով մեկնել են «անհայտ ուղղությամբ»: «Այսօրվա իմ ստուգումով, որն առնչվում է վարչապետ Խատիայանի հաղորդմանը, շարունակում է ցուցմունքը Մակինսկին, - բացահայտվեցին որոշ **չարաշահումներ**: Թե ինչպիսին են դրանք՝ չեմ կարող ասել, մինչև անձամբ չտեսակցեմ և թույլտվություն չստանամ Ադրբեջանի արտաքին գործերի մինիստր Խան Խոյսկուց»:

Ապրիլի 23-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարի անունով գրության մեջ նույն Մակինսկին հայտնում է, որ ձեռքակալվածների մոտ եղած դրամը **նախատեսված է եղել գաղթական մուսուլմանների համար**, իսկ ապրիլի 24-ի գրության մեջ ավելացնում է, որ փողերը **«տարվել են ինքնագլուխ»**, և որ դրանք **նախատեսված են եղել** Ջանգիբասարի և Նախիջևանի շրջանների գաղթականների համար:

Տեղի ունեցածին բոլորովին այլ բացատրություն է տալիս արտաքին գործերի մինիստր Խան Խոյսկին ապրիլի 14-ի հայտագրում, որտեղ նա նշում է, որ «սուրհանդակներից» իսկված փողը պատկանել է նրանց:

Վերոշարադրվածի հիման վրա և համաձայն Պատիժների մասին օրենսգրքի 171 հոդ. և Քրեական դատավարության կանոնադրության 230 հոդ. Հայաստանում ադրբեջանական առաքելությունում ծառայող պահնորդներ բնակիչներ՝ Երևանի գավառի՝ Հուսեյն Վալի օղլին, Երևան քաղաքի՝ Մաշադի Մամեդ Մաշադի Հուսեյն օղլին և Մուսա Մաշադի Մամեդ օղլին մեղադրվում են նրա համար, որ գործելով համատեղ և միմյանց ու Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեմուր Բեկ Մակինսկու միջև կայացած համաձայնությամբ, նպատակ ունենալով նպաստել ապստամբական դրության շարունակմանը Ջանգիբասարում և այդ շրջանը Հայաստանի Հանրապետությունից անջատելու նրա բնակիչների բռնի ձգտումներին, այն Ադրբեջանի Հանրապետության կազմ մտցնելու համար, և իմանալով, որ դա իրականացնելու համար ապստամբներին անհրաժեշտ են դրամական միջոցներ, նրանք կանխատեսված 1920 թ. ապրիլի 4-ին հիշյալ Թեմուր Բեկ Մակինսկուց ստանալով 499.750 ռ. ադրբեջանական, 11.050 ռ. անդրկովկասյան բռնեքով և 1100 ռ. չեկեքով, ադրբեջանական առաքելության ինքնաշարժով դուրս են եկել դեպի Ջանգիբասարի շրջան՝ դրամը Ջանգիբասարի կառավարության ղեկավար Միլլա Կասումին հանձնելու համար, բայց Ջաֆարաբադ գյուղում բռնվել են Էջմիածնի գավառի Ուլջափալարի պահակների ավագ միլիցիոներ Հակոբյանի կողմից, որ նախատեսված է Քրեական օրենսգրքի 51 և 100 հոդվածներով»:

Մեղադրյալների հարցաքննությունը.

Մեղավորության մասին հարցին ամբաստանյալները պատասխանեցին բացառաբար՝ բացատրելով.

1. Հուսեյն Վալի օղլի. դիվանագիտական ներկայացուցիչ Մակինսկին նրան պատվիրել է դրամը տանել Ջանգիբասար: Մակինսկու այդ վստահությունը բացատրվում է նրանով, որ մեղադրյալը 5 տարեկանից մեծացել է առաքելության քարտուղար Միր-Բաբանի ընտանիքում, որը և նրան՝ որպես հավատարիմ ծառայակատարի, երաշխավորել է Մակինսկուն: Դրամը նա տարել է Ջանգիբասար՝ գնելու համար 50 փութ բրինձ և 150 փութ հացահատիկ: Դրամի մնացորդը մեղադրյալը, Մակինսկու հանձնարարությամբ, պետք է հանձներ Միլլա Կասումին: Միլլա Կասումին ես գիտեմ որպես Ջանգիբասարի թաթարների գլխավորի: Գիտեմ, որ այդ թաթարները չեն ցանկանում ձանաչել Հայաստանի Հանրապետության իշխանությունը: Մակինսկին անձամբ դրամը տվել է ինձ: Մյուս պահնորդները ինձ պետք է ուղեկցեին: Սկզբում նրանք չգգնեցին, որ ես դրամ եմ տանում: Բայց այդ մասին ես նրանց ասացի ձանաչարհին:

2. Մաշադի Մամեդ Մաշադի Հուսեյն օղլի և

3. Մուսա Մաշադի Մամեդ օղլի. Մակինսկին նրանց կանչել և հրամայել է ուղեկցել պահնորդ Հուսեյն Վալի օղլուն մինչև Ջաֆարաբադ: Նրանք չգիտեին, որ Հուսեյնի մոտ դրամ կա: Հուսեյնը ձանաչարհին ասել է, որ ծխախոտ է տանում Ջանգիբասար: Միայն այն ժամանակ, երբ միլիցիոները նրանց բռնել է, և բացել պարկը, նրանք տեսել են, որ նրանում փող է:

Դատախազ. Խնդրում եմ հարցնել Հուսեյն Վալի օղլուն՝ նախաքննության ժամանակ նա ասել է արդյո՞ք, որ սուտ է այն վարկածը, թե փողը նա տանում է բրինձ և հա-

ՎԵԿԵՆԵՐԵՆԵՐ

Ե (ԺԵ) քաղթ, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ԿԵՄ համահայկական հանդես

ցահատիկ գնելու համար, և որ իրականում փողը նախատեսված է եղել ապստամբների առաջնորդ Միլլա Կասումին հանձնելու համար:

Հուսեյն Վալի օղլի. Ճիշտ է, հենց այդպես էլ ես ասել եմ միլիտերի օգնականին և վարչության ու միլիցիայի դիրեկտորին, այնտեղ էր և դատարանի դատախազը: Բայց այդ ես ասել եմ այն պատճառով, որ մինչև հարցաքննությունը մի միլիցիոներ ինձ սպառնացել է՝ ասելով, որ ինձ կսպանի: Ճիշտ է, դատախազին այդ սպառնալիքի մասին ես չեմ ասել, բայց հետո ասել եմ քննիչին:

Դատախազ. Մյուս մեղադրյալներին դուք ասել եք արդյոք, որ փող եք տանում:

Հուսեյն Վալի օղլի. Այո, առաքելությունից դուրս գալուց և ինքնաշարժ նստելուց հետո երկուսին էլ ասացի այդ մասին:

Դատախազ. Ավելի վաղ, մինչև փողն այնտեղ տանելը դուք մեկնել եք Ջանգիբասար:

Հուսեյն Վալի օղլի. Դրանից մեկ օր առաջ ես մեկնել եմ այնտեղ: Եղել եմ պարզելու համար, թե կարելի է արդյոք այնտեղ հացահատիկ և բրինձ գնել:

Վկաների հարցաքննությունը.

Ա. Ի. Խատիսյան. Ապրիլի 4-ին ինձ՝ որպես նախարար-նախագահի և արտաքին գործերի նախարարի, զեկուցեցին, որ Ջաֆարաբադ գյուղի մոտ բռնվել են Ադրբեջանի առաքելության երեք պահնորդները և վարորդը, որոնք փորձել են փող անցկացնել Ջանգիբասար:

Ապրիլի 5-ին ես ստացա Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեմուր բեկ Մակինսկու բողոքը, որը, վկայակոչելով միջազգային իրավունքի կանոնների խախտումը, խնդրում էր ազատել ձերբակալվածներին, որոնք «իրենց կամքով մեկնել էին գրոսանքի»: Նույն օրը անձամբ ինձ ներկայացել է Մակինսկին և խնդրել նույն բանը: Ըստ երևույթին նա չգիտեր, որ փողերը նույնպես բռնված են: Իմ հարցերին նա պատասխանեց, որ սուրհանդակները մեկնել են գրոսանքի: Ես հարցրի՝ մեկնողները առաքելությունից որևէ բան չե՞ն տարել: Նա պատասխանեց՝ ոչ: Ես հարցրի՝ նա իր կառավարությունից չի՞ ստացել արդյոք հեռագիր՝ Վեդիբասարի և Նախիջևանի շրջանների թաթարներին օժանդակելու առաջարկությամբ: Նա պատասխանեց բացասաբար: Ես հատուկ իրավաբանական հանձնաժողովին հանձնարարեցի լուծել այն հարցը, թե հիշյալ անձանց ձերբակալությամբ չե՞ն խախտվել արդյոք միջազգային իրավունքի կանոնները: Իրավաբանները տվեցին եզրակացություն, որ միջազգային իրավունքի կանոնների խախտում չկա, և որ ձերբակալությունը կատարվել է ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում գործող քրեական օրենքների համաձայն:

Երկու ժամ անց Մակինսկին ինձ հայտնեց, որ, վերադառնալով տուն, բացահայտել է որոշ չարաշահումներ, բայց չցանկացավ ասել, թե ինչպիսի: Կարծեմ Մակինսկու՝ Բաքու մեկնելուց անմիջապես հետո ստացվել է Ադրբեջանի արտաքին գործերի մինիստր Խան Խոյսկու հեռագիրը, որտեղ ասված է, որ բռնված դրամը պատկանել է իրենց՝ սուրհանդակներին: Ավելի ուշ, Ադրբեջանի ներկայացուցչի պաշտոնական հայտագրերում նշվում էր, որ փողը նախատեսված է եղել մուսուլման գաղթականների համար:

Կառավարության ունեցած տեղեկություններով Միլլա Կասումը Ջանգիբասարի ապստամբների ղեկավարն է և անդամ, այսպես կոչված, զանգիբասարցիների «կառավարության»:

Այն բանից հետո, երբ Մակինսկին համոզվել է, որ դատական մարմինները և կառավարությունը սուրհանդակներին չեն արձակում, նա միանգամայն անսպասելի և հանկարծ Հայաստանից մեկնել է Թիֆլիս: Մովորաբար դիվանագիտական ներկայացուցիչները իրենց մեկնելու դեպքում այդ մասին նախապես ինձ տեղեկացնում էին: Այդպես էր վարվում սովորաբար և Մակինսկին: Նրա վերջին մեկնելու մասին ես իմացա այն ժամանակ, երբ ինձ ներկայացավ ինչ-որ պարոն և հայտնեց այդ մասին:

Պ. Գ. Ցակուլով. Անդրկովկասի երեք հանրապետությունների կազմավորման հենց սկզբում Ադրբեջանի կառավարությունը բոլոր միջոցներով ձգտում էր Հայաստանի ներսում և թիկունքում առաջացնել ապստամբություններ և ելույթներ՝ ձգտելով, Թուրքիայի հետ հաղորդակցված, սպառնալիք ստեղծել Հայաստանի հենց գոյության համար: Իրենց կառավարության այդ ձգտումների իրականացումները Հայաստանում Ադրբեջանի ներկայացուցիչներն էին: Արտաքին գործերի նախարարությունը իր տրամադրության տակ միշտ ունեցել է բազմաթիվ գաղտնի հեռագրեր, որոնք փոխանակել են Ադրբեջանի կառավարությունը, նրա ներկայացուցիչներն ու գործակալները: Այդ

հեռագրերը պարզ ցույց են տալիս այն բոլոր բանասարկությունները և դավերը, որոնք սարքվում էին Հայաստանի դեմ: Ներկա հանցագործների ձերբակալությունից մի քանի օր առաջ դիվանագիտական ներկայացուցիչ Մակինսկին արտաքին գործերի մինիստր Խան Խոյսկուց ստացել է գաղտնագիր հեռագիր, որում, հայտնելով Ղարաբաղում հայերի ապստամբության մասին, նա խնդրում էր բոլոր միջոցներով և անհետաձգելիորեն հնարավոր օգնություն ցույց տալ Վեդիբասարին ու Նախիջևանին, նրանց հայտնել Ղարաբաղի իրադարձությունների մասին:

Պարզ էր՝ Ադրբեջանի կառավարությունը տեղյակ լինելով, որ Հայաստանի կառավարությունը գորքեր կնետի Ղարաբաղ՝ տեղի հայերին օգնելու համար, դիվանագիտական ներկայացուցիչ Մակինսկուն կարգադրում էր բոլոր միջոցներով ելույթներ առաջ բերել Վեդիբասարում, Ջանգիբասարում և այլ վայրերում, որպեսզի հետ պահեն հայկական ուժերը և հնարավորություն չտան կառավարությանը Ղարաբաղ գորքեր ուղարկել: Ըստ երևույթին այդ հանձնարարությունը կատարելու համար պ. Մակինսկին փող է ուղարկել Ջանգիբասար, ապստամբների գլուխ Մոլլա Կասումին: Հիշյալ գաղտնի հեռագրերից, որոնք, խիջիայլոց, վերջերս հրապարակել է արտաքին գործերի նախարարությունը, պարզվում է, որ դրամը ապստամբներին ժամանակին առաքելը ուներ հսկայական նշանակություն: Ես հիշում եմ Նախիջևանի գեներալ-նահանգապետ Ջամալինսկու հեռագիրը, ուր նա ստում է, որ փող չստանալը կաթվածահար կհան աշխատանքը և էական վնաս կհասցնի Ադրբեջանի գործին: Հիշում եմ այլ հեռագիր, որ Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը Երևանից ուղարկել է Բաքու, նրանում ասված է, որ առանց դրամական օգնության Ջանգիբասարը կգտնվի խիստ ծանր վիճակում, իսկ դա ձեռնտու է Հայաստանին, և որ Ջանգիբասարն ու մյուս շրջանները նա պահում է նրանով, որ դրամն արդեն հասել է Թիֆլիս: Հեռագրի վերջում խնդրվում է արագացնել դրամի առաքումը՝ նշելով, որ հայադման յուրաքանչյուր րոպե խիստ ազդում է Ադրբեջանի շահերի վրա: Ես ճիշտ տեղեկություններ չունեմ, թե ինչպիսի պայմաններում է Մակինսկին փողն ուղարկել Ջանգիբասար և ինչպես են ձերբակալվել հանցագործները:

Դատախազ. Վկայի ցուցմունքների կապակցությամբ խնդրում եմ գործին կցել արտաքին գործերի նախարարության հրապարակած հեռագրերը՝ «Հայաստանի սահմաններում Ադրբեջանի կառավարության և ներկայացուցիչների գործունեության մի էջ» վերնագրով: Ժամանակին ես կխնդրեմ ընթերցել այդ հեռագրերից մի քանիսը:

Դատարանը որոշեց. Այդ փաստաթուղթը կցել գործին:

Ա. Ի. Տեր-Հակոբյան. Արտաքին գործերի նախարարության տրամադրության տակ եղած բոլոր վավերագրային տվյալները վառ կերպով վկայում են այն մասին, որ Ադրբեջանի կառավարությունը մշտապես ձգտել է Հայաստանի ներսում և նրանից դուրս ստեղծել թշնամական ճակատներ: Ադրբեջանի կառավարությունը բոլոր միջոցներով օժանդակել է Նախիջևանի, Վեդիբասարի, Ջանգիբասարի և այլ շրջանների ապստամբներին՝ նրանց մատակարարելով մարդիկ, զենք, դրամ, այնտեղ ուղարկելով քարոզիչներ, հրահանգիչներ և այլն: Ավստրիական սպա Միրոկուտտիի և ներկա դատավարությունները վառ ցուցանիշներն են Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության: Հայաստանի արտաքին գործերի նախարարության հրատարակած գաղտնի հեռագրերը վկայում են հենց այդպիսի քաղաքականության մասին: Մինչև ներկա հանցագործության բացահայտումը Ադրբեջանի արտաքին գործերի մինիստր Խան Խոյսկին գաղտնի հեռագրով դիվանագիտական ներկայացուցիչ Մակինսկուն հայտնել է Ղարաբաղի դեպքերի մասին և խնդրել նրան այդ մասին տեղեկացնել Վեդիբասարի և Նախիջևանի թաթարներին՝ բոլոր միջոցներով ցույց տալով նրանց անհետաձգելի օգնություն:

Երբ ձերբակալեցին սուրհանդակներին, փողով, պարզ էր, որ դրամը նրանք փոխադրում էին Մակինսկու հանձնարարությամբ՝ Խոյսկու հեռագրի հիման վրա: Ինքը՝ Մակինսկին, այս գործի վարույթի ընթացքում երկու անգամ Երևանից մեկնել է: Մկզբում Մակինսկին պաշտոնապես գրում էր, որ պահնորդները մեկնել են առանց իր գիտության: Դրամի մասին նա չէր հիշատակում: Հետո սկսեց խոսել, թե իբր հայտնաբերել է չարաշահումներ, իսկ թե ինչպիսի՞ չցանկացավ ասել: Հետո հայտնվեց այն վարկածը, թե այն փողը, որ տանում էին պահնորդները, նախատեսված է եղել Ջանգիբասարի և Նախիջևանի շրջանների գաղթականների համար: Բայց Մակինսկին «դիվանագիտորեն» շրջանցեց այն հարցը, թե սուրհանդակները դրամը ինքնակամ են տարել, թե ինքն է այն հանձնել նրանց:

Շատ հետաքրքիր է նշել Հայաստանից Մակինսկու հանկարծ մեկնելու փաստը: Ոչ

ՎԵԴԻԲԱՍԱՐ

2013 հուլիս-սեպտեմբեր, 3 (43) համիս-սեպտեմբեր, 2013

ՎԵՄ համահայկական հանդես

մեկի ոչինչ չասելով՝ նա դուրս է եկել Հայաստանից և ճանապարհից հեռագրել, որ ինքը հեռանում է և իր պարտականությունները հանձնում է մեկ ուրիշի: Ինչպես ինձ պաշտոնապես բացատրեց Մակինսկու տեղակալ Կիսարեկովը, նա ինչ որ մեկի ճանապարհելիս է եղել Թիֆլիս և պատահաբար մնացել է վազոնում. երբ գնացքը շարժվել է, նա որոշել է գնալ Թիֆլիս:

(Ծիծաղ հասարակության մեջ):

Մակինսկուն նշանակվել է ժամադրություն՝ քննիչի մոտ հարցաքննության համար: Երեկոյան նա հայտնել է, որ մեկնում է Բաքու, ուստի չի կարող ցուցմունքներ տալ քննիչին: Մակայն նրան հասկացրել են, որ, իբրև իրավաբան, անհարմար է, որ նա խուսափի ցուցմունքներ տալուց, որ գործն արագացնելու համար անհրաժեշտ է ներկայանալ հարցաքննության: Դրանից հետո նա համաձայնել է և տվել ցուցմունք:

Առաքելյան. Վկան անձամբ է հարցուփորձ արել մեղադրյալների: Հուսեյն Վալի օղլին բացատրել է, որ Մակինսկին իրեն հրավիրել է որպես վստահելի մարդու և հանձնարարել փող տանել Ջանգիբասար: Փողը նա պետք է հանձնեք ապստամբների գլխավոր Մոլլա Կասումին: Մեկ, թե երկու օր անաջ Հուսեյնը մեկնել էր Ջանգիբասար և այնտեղից, տեղական թաթարներից յուր բերել Մակինսկուն: Թաթարները բացատրել են, որ չեն ճանաչում Հայաստանի իշխանությունը, եթե նույնիսկ Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը իրենց առաջարկի հակառակը: Նա Մակինսկուն գեկուցել է Ջանգիբասարի ուժերի մասին: Հետո Ջանգիբասար փող է տարել: Հենց սկզբից Հուսեյն Վալին ցուցմունք է տվել, որ փողը նա տարել է քրիստոնե և հացահատիկ գնելու համար:

Ես նրան բացատրեցի, որ եթե ասի ձձարտությունը, ապա դա կթեթևացնի նրա վիճակը: Այդ դեպքում նա ասաց այն, ինչ ես հիմա գեկուցեցի: Չի կարող խոսք լինել ապամնալիքի և ճնշում գործադրելու մասին, քանի որ նա ցուցմունք է տվել Վարչության և միլիցիայի դիրեկտորի և դատարանի դատախազի ներկայությամբ: Ես հիշում եմ, որ Հուսեյն Վալուն նույնիսկ մերկացրել են, որպեսզի բոլորը համոզվեն ու արձանագրեն, որ նրա նկատմամբ ոչ մի բռնություն չի կատարվել:

Իվախնենկո. Ես ծառայում եմ որպես առաքելության վարորդ: Ինձ ասացին, որ պետք է մեքենա մատուցել: Ես դա կատարեցի: Մեքենա նստեցին երեք պահնորդները: Հուսեյնի մոտ կար պարկ: Ես չգիտեմ, թե նա ինչ էր տանում: Ուր մեկնել հարցին սուրհանդակները ոչինչ չպատասխանեցին: Նրանք ինձ հրամայում էին՝ «Աջ, ձախ, ուղիղ»: Երբ ես անցա Ջանգիբասարի կամուրջը, ինձ ասացին, որ հարկավոր է մեկնել Ջաֆարաբադ: Ջաֆարաբադի մոտ պահնորդները պահանջեցին գնալ դեպի Ջանգիբասար: Ես պատասխանեցի, որ ճանապարհը վատն է, չեմ կարող: Այդ դեպքում նրանք իջան և շարունակեցին ոտքով: Շուտով նրանց ձերբակալեցին: Ձերբակալեցին և ինձ: Բայց հիմա իմ նկատմամբ գործը կարճվել է: Պահնորդներն ասում էին, որ գնում են Ջանգիբասար՝ ոչ այն է հարսանիք, ոչ այն է խնջույքի, ես լավ չհասկացա, քանի որ թաթարերեն չգիտեմ:

Հրապարակվում է Մակինսկու ցուցմունքը:

Ապրիլի 4-ին ավագ պահնորդ Հուսեյն Ղարիբովը ինձ գեկուցեց, որ միսիայի երեք պահնորդներ, առանց իր գիտության, առաքելության ինքնաշարժով մեկնել են անհայտ ուղղությամբ և մինչև հիմա չեն վերադարձել: Մոտավորապես ժամը 11-ին ինձ հայտնի դարձավ, որ նրանք ձերբակալված են: Այդ ժամանակ էլ ես բողոք հայտնեցի Հայաստանի կառավարությանը: Այն հարցին, թե ես չեմ ենթադրում արդյոք, որ նրանք իրենց հետ առաքելությանը պատկանող ինչ-որ իրեր են տարել, հայտարարում եմ հետևյալը. իմ այսօրվա ստուգումը (կապված Խատիսովի հաղորդման հետ, թե պահնորդները ձերբակալված են քաղաքից հեռու), բացահայտեց որոշ չարաշահումներ: Մակինսկու դրանց էության վերաբերյալ հնարավոր չեմ համարում այժմ ցուցմունքներ տալ, քանի որ այդ կապակցությամբ կատարում եմ ուսումնասիրություն՝ մեղավորներին հայտնաբերելու համար: Չեմ կարող ասել, թե դրանք ինչպիսի չարաշահություններ են, մինչև անձամբ չհանդիպեմ ու թույլտվություն չստանամ Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի մինիստրից: Ձեր այն հարցին, թե ես չեմ ստացել արդյոք հեռագիր Վեդիբասարի, Նախիջևանի և մյուս ծակատների վերաբերյալ, ես համարում եմ անհարմար և ինձ ոչ իրավասու, որպես դիվանագիտական ներկայացուցիչ, դրան պատասխանելու համար:

Մեղադրյալներին թարգմանեցին բոլոր վկաների, ինչպես նաև Մակինսկու ցուցմունքները: Նրանք ասացին, որ զարմանում են՝ ինչու Մակինսկին ճիշտ չի խոսում և

թաքցնում է, որ փող է տվել Զանգիբասար հասցնելու համար: Նրանք երբեք ինքնագլուխ չեն գրոսնել: Առաքելությունից ինքնագլուխ ոչինչ տանել չէին կարող, քանի որ իրավունք չունեին մտնելու սենյակները և, բացի այդ, բանալիները միշտ գտնվում էին Մակինսկու մոտ: Պարզ է, որ Մակինսկին ճիշտ չի խոսում: Նրանք չգիտեն, թե Մակինսկին Բաքվից ինչ հեռագրեր է ստացել ընդհանրապես: Գիտեն, որ Զանգիբասարը չի ձանաչում Հայաստանի իշխանությունը: Գիտեն, որ Մուլա Կատունը կանգնած է Զանգիբասարի ապստամբների գլուխ:

Դատական նիստի լրացումը

Դատախազի խնդրանքով կարդացվում են բազմաթիվ վերծանված հեռագրեր: Հրապարակվում են նաև բոլոր այն հայտագրերը, որոնք այս գործի առիթով ուղարկվել են Մակինսկու և Խան Խոյսկու կողմից: Ընթերցվում են չներկայացած վկաներ Շուխովի, միլիցիոներ Հակոբյանի և մյուսների ցուցմունքները:

Ժամը 2-ին հայտարարվում է ընդմիջում մինչև երեկոյան ժամը 5-ը, երբ սկսվում են կողմերի վիճաբանությունները:

Մեղադրողի ճառը

Պ. պ. Զինվորական դատավորներ.

Այսօրվա դատավարությունը բացառիկ է իր քաղաքական և պատմական կառուցողությամբ:

Մենք այստեղ հանդես ենք գալիս խիստ հարուստ ձևով, Ձեզ ներկայացնելով հսկայական մեղադրական նյութ ոչ միայն մեղադրյալների այթոռներին նստածների, այլև մեր հասանելիության սահմաններից դուրս գտնվողների նկատմամբ:

Եվ այս ամբողջ նյութը, Ձեր վճռի հետ, պարոն զինվորական դատավորներ, կհարստացնեն այն վավերագրերը, որոնցով մենք կկանգնենք կուլտուրական աշխարհի և պատմության դատաստանի առաջ:

Հանցագործ Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը ուղղված է եղել նրան, որ հյուծի, ուժասպառ անի և ոչնչացնի հայկական պետականությունը:

Դրա ապացույցն են այսօր հրապարակված մի շարք վավերագրեր:

Հայաստանն ուժասպառ անելու համար անհրաժեշտ էր քառ հնարավորին գրկել նրան զինական ուժից: Դրա համար Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկին իր Մինիստր-Նախագահին խորհուրդ է տալիս՝ այն պատրվակով, թե մեծամասնականները (բոլշևիկները-Վ.Ղ.) սպառնում են Բաքվին, խնդրել անգլիացիներին Կարսից թնդանդոթներ փոխադրել Բաքու:

Դուք գիտեք, պարոն զինվորական դատավորներ, որ այդ սադրանքը որոշ չափով հաջողվեց և մեծամասնականների դեմ պայքարելու համար Կարսից դուրս բերված հրանոթները ընկան Ադրբեջան, որը կախարդական շարժումով և ձակատագրի ծաղրով միայն մեծամասնականների (բոլշևիկների-Վ.Ղ.) մոտենալով՝ դարձել է «կարմիր»⁵:

Ադրբեջանին հարկավոր էր անգործության մատնել Հայաստանի երկաթուղային ճանապարհները, իսկ նույն Թեքինսկին իր կառավարությանը խորհուրդ է տալիս մագլուխ չտալ Հայաստանին: Հարկավոր էր փակել պարսկական շուկան, և դրա համար ամեն տեսակի արգելքներ են դրվում Երևան-Ջուլֆա երկաթուղու բացմանը: Դիվանագիտական ներկայացուցիչ Հալավերդովը ճանապարհի բացումը համարում է աննպատակահարմար: Վերջապես, ստեղծվում են ֆինանսական դժվարություններ, իբր, ինչպես այդ առաջարկում է և Թեքինսկին, «հասույթի բացակայության պատճառով Հայաստանը չի կարող ինքնուրույն գոյություն ունենալ»:

Մրանք բոլորը չեն, պարոն զինվորական դատավորներ, որ բերվեցին արտաքին գործերի նախարարության հրապարակած և սույն գործին կցված գաղտնագրերով զինվանագիտական հեռագրերից:

«Բացի Հայաստանից,- հեռագրում է Թեքինսկին,- Ադրբեջանը, թվում է, այժմ այլ թշնամի չունի, ուստի նրա վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել»:

«Ուստի Շարուր-Դարալագյազի շրջանից հարկավոր է վտանգ ստեղծել Հայաստանի համար, շտապ բաց թողնելով դրան»:

«Օգնության խնդրանքին ես բեռնափակիցիներին հայտարարեցի, որ մուսուլման-

5 Խոսքը Ադրբեջանի խորհրդայնացման մասին է՝ Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի մուտքով Բաքու 1920 թ. ապրիլի 28-ին:

ՎԵՐԵՆԵՐԻ

3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

Ե (ԺԵ) քարի, թիվ 3

ՎԻՄ համահայկական հանդես

ների կրած բոլոր վնասներն ու ծախսերը անմիջապես կհատուցվեն Ադրբեջանի կողմից»:

Կազմակերպելով ապստամբական շարժում Հայաստանում՝ Ադրբեջանի գործիչները շարունակում են նրան մատակարարել և օժանդակել:

Այստեղ՝ Հայաստանի սրտում, լրտեսական կազմակերպություն դարձած դիվանագիտական առաքելությունը որսում է գեներալ Շելկովնիկովի⁶ հրամանները և ուղարկում ապստամբներին «ի գիտություն»:

«Մուսուլմաններն առայժմ չեն ցանկանում գրավել Երևանը»:

Ինչպիսի սպառնալիքով է հնչում այդ «առայժմ»-ը և ինչպես է այն բնութագրում Ադրբեջանի գործունեության ամբողջ գաղտնի ինստիտուտը:

«Երկու շաբաթում հարկավոր է հաշիվները փակել Ջանգեզուրի հետ և գորքերն առջ շարժել դեպի Դամարլու, - խորհուրդ է տալիս այդ նույն Թեքինսկին: - Դա արեք առանց պատերազմ հայտարարելու»:

Բարեբախտաբար Ջանգեզուրի և Դարաբադի լեռնային արծիվները հնարավորություն չտվեցին իրականացնելու այս պլանը:

Միջազգային իրավունքի հասկացության մեջ դեռսպանը ներկայացնում է իրեն լիազորած պետությունը այն պետության հետ միջազգային-իրավական հարաբերություններում, որտեղ նա հավատարմագրված է:

«Դեսպանի յուրաքանչյուր փորձ՝ միջամտել այն պետության ներքին գործերին, որին կից նա հավատարմագրված է, միջազգային իրավունքի խախտում է, - նշում է միջազգային իրավունքի պրոֆ. Ֆ. Լիստը, - գաղտնի հետախույզներից օգտվելը նրան ցուցաբերած վատահոլության ապօրինի չարաշահում է»:

Միջազգային-իրավական վավերագրերը, կասեն մեզ, այժմ ոչ մեկի համար պարտադիր չեն: Այդ դեպքում ինչու դրանք պահպանվում են մեր կողմից, ինչու մեղադրյալների աթոռին մենք չենք տեսնում պարոններ Թեքինսկիներին, Մակինսկիներին և նման հանցագործ «դիվանագետներին»:

Սակայն հետևելով Ադրբեջանին՝ մենք չենք կարող մեր իրավացիության այդպիսի գիտակցությամբ կանգնել կոլտուրական աշխարհի առջև և պահանջել մեր ոտնահարված իրավունքների վերականգնումը: Նույնիսկ հիմա մայրաքաղաքին անմիջապես մոտ ունենք Հայաստանի կառավարության իշխանությանը չենթարկվող ապստամբական շրջան: Եվ այդ շրջանի հետ, պարոն զինվորական դատավորներ, Ադրբեջանի դիվանագիտական առաքելությունը պահպանել է մշտական կապ՝ որպես միջնորդ մարմին Ադրբեջանի և ապստամբների միջև:

«Հարկավոր է փողով մեկնել Նախիջևան: Ջանգիբասարը նույնպես սուկայի դժվարության մեջ է՝ առանց մեր դրամական օգնության: Երկու շրջանն էլ ես պահում եմ այն հույսով, որ փողը կուղարկվի անմիջապես», - զեկուցում է դիվանագիտական ներկայացուցչի տեղակալ Մուսանը:

«Եթե զանգիբասարցիները հանձնվեն, մենք կզրկվենք շատ բանից», - սահազանգում է Միր Բաբանը:

Վերջապես, մարտի 24-ին Ադրբեջանի արտաքին գործերի մինիստրը դիվանագիտական ներկայացուցիչ պ. Մակինսկուն ուղարկել է այստեղ հրապարակված գաղտնագիր հեռագիր. «Շտապ հայտնեք, - սաված է այդ հեռագրում, - Վեդիբասարի և Նախիջևանի հետագա դեպքերի մասին: Անհրաժեշտ է բոլոր միջոցներով անհետաձգելի հնարավոր օգնությունը ցույց տալ Վեդիբասարին և Նախիջևանին»:

Այդ հեռագիրը, պարոն զինվորական դատավորներ, մենք Ձեզ ենք տրամադրել տարբեր տեսքով. գործին կցված է հեռագրական ժապավենը՝ այնպես, ինչպես հաղորդել է Բաքվի հեռագրատունը: Այնուհետև մենք ունենք այդ հեռագիրը գաղտնագրեծված ձևով: Դուք տեսաք բանալին, որով այդ հեռագիրը գաղտնագրեծվել է, և վերջապես, հեռագրի բուն տեքստը: Նշանակում է Ձեզ մոտ չի կարող կասկած լինել:

Ստանալով այդ հեռագիրը՝ Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ պ. Մակինսկին անմիջապես իր մոտ ծառայող Հուսեյն Վալի օլլուն ուղարկում է Ջանգիբասարի շրջան՝ պարզելու համար, ինչպես այդ ցույց տվեց ինքը՝ Հուսեյն Վալի օլլին, թե «զանգիբասարցիները մտադիր են արդյոք ենթարկվելու Հայաստանի կառավարությանը և ինչպիսի զինված ուժեր ունեն»:

6 Գեներալ Շելկովնիկովը (Շելկովնիկյան) մահացել է 1921 թ.՝ հայ սպաներին Ռուսաստան քաղաքներում ժամանակ (Հյուսիսային Կովկասում ընկել է գնացքի տակ):

Այնուհետև իմանալով, որ զանգիբասարգիները առանց դրամական օգնության շատ դժվարին դրության մեջ կգտնվեն, որ նրանց ապստամբական դրությունը շարունակելու համար անհրաժեշտ է հնարավոր սահմաններում բավարարել բոլոր կարիքները, որ զգում են ապստամբության ղեկավարները ապստամբական դրությունը պահելու համար, և ստանալով ապստամբներին անհետաձգելի օգնություն ցույց տալու մասին վերը բերված Խան Խոյսկու առաջարկությունը, պ. Մակինսկին իր մոտ է կանչել մեղադրյալ Հուսեյն Վալի օղլուն, մեղադրյալներ Մուսա Մաշադի Մամեդ օղլու և Մաշադի Մամեդ (Մաշադի) Հուսեյն օղլու հետ և նրանց պատվիրել Ջանգիբասար կամավարության գլխավոր Միլլա Կասումին հասցնել դրամի պարկը:

Սահմանն անցնելու պահին մեղադրյալների, դրամի հետ, ձերբակալության հանգամանքները Ձեզ հայտնի են, և ես ինձ թույլ եմ տալիս մի փոքր կանգ առնել սույն հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի մեղավորության վրա:

Նրանց ներկայացված մեղադրանքը առարկայորեն այսպիսին է: Մեղադրյալները, գործելով համատեղ և միմյանց ու դիվանագիտական ներկայացուցիչ պ. Մակինսկու միջև կայացած նախնական համաձայնությամբ, նպատակ ունենալով նպաստել Ջանգիբասարի ապստամբական դրության շարունակմանը և նրա բնակիչների՝ Ադրբեջանի Հանրապետության կազմի մեջ մտցնելու համար այդ շրջանը Հայաստանի Հանրապետությունից անջատելու բռնի ոտնձգություններին և, իմանալով, որ դա իրականացնելու համար ապստամբներին անհրաժեշտ են դրամական միջոցներ, նրանք կանխամտածված ձևով ս. թ. ապրիլի 4-ին Մակինսկուց ստանալով 499.750 ռ. ադրբեջանական, 11.050 ռ. անդրկովկասյան բռնեղով՝ մեկնել են Ջանգիբասար՝ այդ փողերը Ջանգիբասարի կառավարության գլուխ Միլլա Կասումին հանձնելու համար:

Այացուցված է արդյոք, թույլ եմ տալիս հարցնել, որ վերոհիշյալ անձինք գործել են համատեղ և նախապես միմյանց միջև կայացած համաձայնությամբ:

Պ. Մակինսկին արտաքին գործերի մինիստրի անունով իր նոտաներում փորձում է համոզել, որ «պահնորդները առաքելության ինքնաշարժը վերցրել և մեկնել են զբոսանքի, ինչպես այդ նրանք հաճախակի մինչ այդ արել են»:

Մակայն մեղադրյալները պարզաբանում են, որ պ. Մակինսկին հրամանները տալիս էր անձամբ: Այսօր հրապարակված փաստաթղթերից և պ. Մակինսկու հակասական և անտրամաբանական բացատրություններից էլ երևում է, որ այդ պնդումը կեղծ է:

Եվ, իրոք, սկզբում պահնորդները մեկնել են ինքնագլուխ, իսկ առաքելությունում ոչինչ չի կորել, այնուհետև՝ քննիչի մոտ հարցաքննության ժամանակ գլխի ընկնելով, որ հանցագործությունը բացահայտված է, նրա համար պարզվել են որոշ չարաշահումներ, որոնց մասին, սակայն, ոչինչ ասել չի կարող, մինչև թույլտվություն չստանա Խան Խոյսկուց:

Տարօրինակ չի՞ թվում արդյոք, երբ կատարվում է հանցագործություն՝ առաքելությունից «ինքնագլուխ» դուրս է տարվում ավելի քան կես միլիոն բռն, իսկ այդ մասին պ. Մակինսկին սկզբում ոչինչ չի իմանում, իսկ հետո իմանալով, մինչև Խան Խոյսկու հետ տեսակցելը այդ մասին չի կարող հայտնել: Այնուհետև, արդեն Խան Խոյսկու հետ տեսակցելուց հետո պ. Մակինսկին բացատրում է, որ փողերը նախատեսված են եղել գաղթականների համար, բայց տարվել են ինքնագլուխ և ու՞ր, պարզվում է՝ ըստ նշանակման:

Բայց այստեղ Մակինսկու այդպիսի անկապ բացատրություններով գործը փչացնում է ինքը Խոյսկին, ով իր նոտայում նշում է, որ փողերը պատկանում են հենց հանցագործներին: Նոր տարբերակ, նոր բացատրություն:

Մաշադի Մամեդ Մաշադի Հուսեյն օղլու և Մուսա Մաշադի Մամեդ օղլու մասնակցությունը, չնայած իրենց կողմից մեղքի ժխտմանը, լրիվ հաստատված է:

Հուսեյն Վալի օղլին, ով ըստ էության չի փորձում ժխտել մեղադրական գործի եզրակացությունները, ինչպես այստեղ, այնպես էլ նախաքննության ժամանակ իր բացատրություններում հաստատում է, որ պ. Մակինսկու մոտից դուրս գալուց հետո և Ջանգիբասարի ծանապարհին իրեն ուղեկցող պահնորդներին ասել է, որ իր մոտի պարկում փող է, և որ այդ փողերը ենթակա են եղել հանձնելու Միլլա Կասումին Ջանգիբասարում:

Վարչության ու միլիցիայի դիրեկտորի և շրջանային դատարանի դատախազի ներկայությամբ հետաքննության ժամանակ կատարած ամերեսումով այդ հանգամանքը հաստատվել է, իսկ նույն Մաշադի Մամեդ Մաշադի Հուսեյն օղլին այդ մասին նշել է ավելի վաղ: Եվ այն տարբերակը, թե ըստ նրանց ենթադրության, պարկում եղել է

ՎԵՐԵՎՈՐԵՐ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

ծխախոտ, չի կարող ուշադրության առնվել, քանի որ, պարոն զինվորական դատավորներ, Դուք տեսնում եք, որ պարկույմ գտնվող փողի կապոցները հազիվ թե կարելի լինեն, ըստ արտաքին ուրվագծի ու կշռի, ընդունել ծխախոտի տել:

Այսպիսով, մեղադրյալներից յուրաքանչյուրը և բոլորը միասին գիտեին, որ պարկույմ փող է, որը Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչն ուղարկում է ապստամբական պայմաններում գտնվող Ջանգիբասար, որի հետ հարաբերություններ չէին թույլատրվում, և որ այդ փողերը հարկավոր էր հանձնել Ջանգիբասարի «կառավարության» գլխավոր Միլա Կասումին:

Մեղադրյալների համար հանցագործության շարժառիթը, ծառայական պարտականությունից զատ, եղել է հավատակիցներին օգնելու ցանկությունը՝ դրանով իսկ ազգի նկատմամբ պարտքի կատարումը:

Այսպիսով, մեղադրական եզրակացության բոլոր հանգամանքները լրիվ հաստատված են:

Միջազգային իրավունքի կանոններին վերաբերող բոլոր տվյալները կան գործին կցված իմ հատուկ եզրակացության մեջ, ուստի դրանց վրա կանգ չեմ առնի:

Անցնելով տվյալ հանցագործության վերաբերյալ պատժաչափի որոշմանը, հարկավոր է նշել, որ Պատիժների մասին օրենսգրքի 100 հոդ. հիշված պատժաչափը վերացված է ժամանակավոր կառավարության կողմից, իսկ 1919 թ. հուլիսի 24-ի օրենքով որոշված մահապատժի հոդվածների ցանկում 100 հոդ. չի նշված, ուստի պատիժը որոշելիս Դուք պետք է ելնեք նրանից, որ այն պետք է մեղմ լինի անժամկետ տաժանակիր աշխատանքից:

Մենք ապացուցեցինք, պարոն զինվորական դատավորներ, մեղադրյալների կատարած հանցագործության առկայությունը, և այստեղ տեղը չէ սրտաշարժ ներողամտության: Ձեր արդարամիտ վճռին է սպասում տառապյալ հայ ժողովուրդը, սպասում է բանակը, որը կրծքով պաշտպանում է իր հայրենիքի սահմանները: Տվեք մեր մարտիկին հանգիստ վատահություն, որ երկիրն ամեն ինչ անում է՝ կասեցնելու համար պետության ամբողջականության նկատմամբ նման հանցագործ ոտնձգությունները, որոնք մեզ արժենում են մեծ, անվերադարձ կորուստներ:

Մենք բավական հետևողական ենք, որպեսզի դուրս չգանք օրինականության սահմաններից: Այդ մասին բավական պերճախոս վկայում են և միջազգային իրավունքի կանոնների շնորհիվ Մակինսկուն չներգրավելը, և լրացուցիչ նախաքննության ժամանակ որակավորման փոփոխումը, որը բացառում է մահապատժի գործադրման հնարավորությունը, և բաց դատավարությունը, և մեղադրյալների մյուս բոլոր երաշխիքները: Եվ այս ամենով հանդերձ՝ մենք իրավունք ունենք Ձեզանից պահանջելու, պարոն դատավորներ, խիստ վճիռ:

Մեղադրյալների ձևկատագրի թեթևացումը կլինի մեր խորհրդարանի ու կառավարության գործը՝ հանցագործ Ադրբեջանի հանցագործ ոտնձգությունների դադարեցման պայմանով:

Բավական ծանր գնով է տրվել մեզ մեր անկախությունը: Բազմաչարչար հայ ժողովուրդը բավական շատ արյուն է թափել նրա համար, որ չնահանջենք մեր ընտրած սրբազան ուղուց: Եվ կապացուցենք աշխարհին, որ անկոտրում ենք պաշտպանելու մեր պետականությունը և մեր ժողովրդի բուն կեցությունը:

Դատապաշտպանի ճառը

Անցնելով իմ խնդրի կատարմանը՝ նախ և առաջ ուզում եմ հարց տալ պ. դատախազին. ինչո՞ւ իր ճառում նա անընդհատ կրկնում էր «պարոն» Մակինսկի, «պարոն» Խան Խոյսկի և այլն: Գործի նյութերը նրան թույլ էին տալիս օգտագործել համապատասխան մակնունները: Եվ եթե նա դա չարեց, ապա թույլ տվեք ես ասեմ. ոչ թե «պարոն», այլ հանցագործ Մակինսկի, Խան Խոյսկի, Թեքինսկի...: Նրանք հանցագործներ են ոչ միայն հայ ժողովրդի, այլև ադրբեջանական ժողովրդի նկատմամբ: Հանցագործներ են ներկա մեղադրյալների նկատմամբ, որոնց հասցրել են մեղադրյալի աթոռին, իսկ իրենք խուսափել արդարադատության սրից՝ քողարկվելով այսպես կոչված արտերկրայնությամբ: Մակայն ադրբեջանական ժողովուրդը չի ների այս բեկական-խանական մեքենայությունները, և ես հավատում եմ, որ կգա ժամանակը, և ադրբեջանական ժողովուրդը նրանց կկանչի պատասխանի՝ իրենց կատարած չարագործությունների համար:

Պարոն զինվորական դատավորներ, Ձեզ համար, ինչպես և ինձ համար պարզ և

ակնհայտ է, որ մեղադրյալի աթոռին նստած են, ինչպես հաճախ է պատահում, «սլաքավարները»: Ամբողջ ժամանակ այստեղ փորձում էինք պարզել, թե այս մանր մարդիկ արդյոք տեղյակ են եղել այն զագրելի քաղաքականությունից, որ վարել են խոշոր տրամաչափի հանցագործները: Եվ պարզեցինք, որ նրանք տեղյակ չեն եղել և չէին էլ կարող տեղյակ լինել: Կարելի է արդյոք երևակայել, որ ավատատեր կամ բեկ Մակինսկին կամ Խան Խոյսկին ինչ-որ պահնորդ Հուսեյն Վալու տեղյակ պահեին իրենց քաղաքական նենգություններին ու մեքենայություններին: Իհարկե, ոչ: Նշանակում է, հիմք չկա չհավատալու մեղադրյալներին, ովքեր հայտարարում են, որ ոչինչ չեն իմացել և չգիտեն այն հեռագրերի բովանդակության մասին, որ այստեղ հրապարակվեցին:

Մեղադրյալներից միայն Հուսեյն Վալի օղլին է իմացել, որ, իսկապես, փող են փոխադրում: Մյուս երկուսը չեն իմացել և չէին էլ կարող իմանալ, քանի որ Հուսեյնը նրանց ասել է, որ ծխախոտ են տանում: Բոլոր երեք մեղադրյալները կուրորեն կատարել են Մակինսկու հրամանները, ընդ որում մեղադրյալներից երկուսը պետք է միայն ուղեկցեին Հուսեյնին: Հրամանը չկատարել նրանք չէին կարող:

Անցնելով մեղադրյալների դեմ հանցանշանների վերլուծությանը՝ դատապաշտպանը ապացուցում է, որ հանցանշանները չնչին են նրանց պատժելու համար: Համենայն դեպս նրանցից միայն Հուսեյն Վալի օղլու մեղավորության մասին կարող է խոսք լինել: Պաշտպանն ապացուցում է, որ հանցագործության իրավաբանական որակավորումը ձիշտ չէ. խոսք կարող է գնալ միայն դավաճանության մասին, քանի որ Ջանգիրասարը Հայաստանի սահմանների մեջ է, մեղադրյալներն էլ Երևան քաղաքի ու նրա գավառի բնակիչներ են: Ինչպես էլ որակավորվի հանցագործությունը, մեղադրյալները պետք է արդարացվեն, քանի որ նրանց մեղավորությունը ապացուցված չէ:

Մեղադրյալների վերջին խոսքը.

Մեղադրյալները վերջին խոսքում խնդրում են իրենց արդարացնել:

Վճիռ

1920 թ. հունիսի 3: Հայաստանի Զինվորական դատարանի Հատուկ ատյանը Երևան քաղաքում, դռնբաց հատուկ նիստում, հետևյալ կազմով.

Նախագահող՝ գեներալ-մայոր Խորումանսկի, ատյանի անդամներ՝ Զինվորական նախարարի տրամադրության տակ գտնվող գնդապետ Մելիք-Գուրջին, գինվորական հրամանատարի մոտ գործուղված գնդապետ Խոսրովխանի, Համբարակայի վարչության փոխգնդապետ Պետրոսյանց և Երևանի պահակային գումարտակի շտաբսկայիտան Բուռնուսուզյանց, Զինվորական դատախազին կից փոխգնդապետ Եղիազարով և դատարանի քարտուղարի օգնական, ռազմական ժամանակի չինովնիկ Տեր-Աբրամով, լսեց գործը Երևան քաղաքի բնակիչ Հուսեյն Վալի օղլու, Երևան քաղաքի բնակիչ Մաշադի Մամեդ Մաշադի Հուսեյն օղլու և Մուսա Մաշադի Մամեդ օղլու մասին, ովքեր մեղադրվում են Քրեական օրենսգրքի 51 և 100 հոդվածներով:

Գործում եղած տվյալների համաձայն մեղադրյալները՝ Հուսեյն Վալի օղլին՝ 25 տարեկան, Մաշադի Մամեդ Մաշադի Հուսեյն օղլին՝ 22 տարեկան և Մուսա Մաշադի Մամեդ օղլին՝ 23 տարեկան, Երևան քաղաքի և գավառի բնակիչներ, մուսուլմանական հավատի, չդատված:

Լսելով գործը՝ Հատուկ ատյանը ձանաչեց մեղադրյալներին՝ որպես պահնորդներ Հայաստանի Ադրբեջանական առաքելությունում ծառայության մեջ գտնվող բնակիչներ՝ Երևան գավառի՝ Հուսեյն Վալի օղլուն, Երևան քաղաքի՝ Մաշադի Մամեդ Մաշադի Հուսեյն օղլուն և Մուսա Մաշադի Մամեդ օղլուն⁷, մեղավոր նրանում, որ գործելով համատեղ և միմյանց ու Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեյմուր բեկ Մա-սկինսկու միջև կայացած համաձայնությամբ, նպատակ ունենալով նպաստել Ջանգիրասարի ապստամբական դրության շարունակմանը և շրջանը Ադրբեջանի Հանրապետության կազմի մեջ մտցնելու համար Հայաստանի Հանրապետությունից անջատելու նրա բնակիչների բռնի ոտնձգություններին և իմանալով, որ դա իրագործելու համար անհրաժեշտ են դրամական միջոցներ, նրանք կանխամտածված ձևով 1920 թ. ապրիլի 4-ին ստանալով վերը հիշված Թեյմուր բեկ Մակինսկուց 499.750 ռ. ադրբեջանական, 11.050 ռ. անդրկովկասյան բռնեղով և 1100 ռ. չեկերով, ադրբեջանական առաքելության ինքնաշարժով մեկնել են Ջանգիրասարի շրջան՝ փողերը Ջանգիրասարի կառավա-

7 Բագրում սխալ է մեքենագրված՝ Машади Мамед Машади Гусейн Вали оглы.

ՎԵՐԿՆԵՐԸ

Խոսքի վերջին խոսքը, 2013

ԿԻՄ համահայկական հանդես

րության ղեկավար Միլլա Կասումին հանձնելու համար, բայց Ջաֆարաբադ գյուղում ձերբակալվել են Էջմիածնի գավառի Ուչթափալարի պահակակետի ավագ միլիցիոներ Հակոբյանի կողմից:

Անդրադառնալով այս արարքի էության բնորոշմանը և մեղադրյալների պատժի նշանակմանը՝ Հատուկ ատյանը գտնում է, որ այդ արարքը, մաս լինելով Ադրբեջանի Հանրապետության կազմի մեջ մտցնելու նպատակով Հայաստանի Հանրապետության տվյալ տարածքը անջատելու բռնի ոտնձգության, նախատեսվում է Քրեական օրենսգրքի 51 և 100 հոդվածներով, որ պահանջում է մահապատիժ, ենթակա են նշված հանցագործության բոլոր մասնակիցները: Մակայն հաշվի առնելով, որ 1919 թ. հուլիսի 24-ի մահապատժի մասին օրենքով Հայաստանի Հանրապետությունում նշված հանցագործությունը նախատեսված չէ, Հատուկ ատյանը Քրեական օրենսգրքի 53 հոդվածի համաձայն մահապատժի փոխարեն հանցագործներին նշանակեց Հուսեյն Վալի օղլուն՝ տաժանակիր աքսոր, անժամկետ, իսկ մյուսներին, յուրաքանչյուրին տաժանակրության 10 տարի, համապատասխան օրինագրկությամբ:

Հետևաբար և 1903 թ. հրատարակության Քրեական օրենսգրքի 51, 53 և 100 հոդվածների, ինչպես նաև Քինվորական կանոնադրության հավաքածուի 24-րդ գրքի 1869 թ. 4-րդ հրատարակության 910, 915, 1128, 1155 հոդվածների հիման վրա Հատուկ ատյանը որոշեց. 1) Հանցագործներ Հուսեյն Վալի օղլուն՝ 25 տարեկան, Մաշադի Մամեդ Մաշադի Հուսեյն օղլուն՝ 22 տարեկան և Մուսա Մաշադի Մամեդ օղլուն՝ 23 տարեկան, հանցավոր ծանաչված Ադրբեջանի Հանրապետության կազմի մեջ մտցնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունից տարածքի մի մասը անջատելու բռնի ոտնձգությանը մասնակցելու մեջ, նրանցից յուրաքանչյուրին զրկել գույքի բոլոր իրավունքներից՝ Քրեական օրենսգրքի 25, 29 և 30 հոդվածների համաձայն և աքսորել առաջինին (Հուսեյն Վալի օղլի)՝ տաժանակրության, անժամկետ և մյուսներին, յուրաքանչյուրին՝ տաս տարի և 2) դատական ծախսերը գանձել նրանց ունեցվածքից, հավասարապես, միմյանց համար համապարտ պատասխանատվությամբ, իսկ նրանց ընդհանուր անկարողության դեպքում ընդունել պետության հաշվին:

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 222 և հակ.- 227 և հակ.:
Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից: